142 ***Ասեն, թէ ն՟հանգ[1] կա[յ] յԱրածանի՝ որպէս [յ]Եփրատ[2]. զոր հաւաստի գիտեմք՝ կենդանիս[3] քարքաշամ զուգեալ, զարիւնն ծ՟ծեալ եւ թողեալ:*** 143 ***Զոր ոմանք ասեն, թէ գազան է. եւ չէ դեւ, այլ՝ գազան, զոր Յոհանն[4] վասն դստերն Հերոդիադա[յ] ասէ, թէ՝ «Քան զն՟հանգսն[5] ծովա[յ]ինս արիւնարբու էր»:***

144 ***Ե. Աշխարհ Մո[կ]ք [յ]ելից[6] կան Աղձնեաց[7], ի լերինն Տաւ[25բ]րոս[8]:*** 145 ***Ունի գաւառս ինն[9]՝ զԻշայր, [զմիւս Իշայր][10], զԻշուց գաւառն, զԱռ[ո]ւենէից[11] ձոր, զՄիջաց[12], զԱռանձնական Մոկաց գաւառն, յորում՝ գետն Որբ, զԱրքա[յ]ից գաւառ, զԱրգովտեաց ովիտ[13], [զ]Ջերմաձոր[14], յորում՝ գետն Մերմ[15]:*** 146 ***Ունի ի մրգաց՝ զարշատ[16] եւ մանրագոր, եւ ի գազանաց՝ ինձ գեղեցկախայտ[17], [եւ ի[18] Հաւուց՝ կաքաւս][19]:***

147 ***Զ. Կորճէք յելից կան Մոկաց, [առ Ասորեստանեաւ][20]:*** 148 ***Ունի գաւառս [մե]տաս[ա]ն[21]՝ զԿորդուս, յորում՝ Թման առ Ասորեստանեաւ, զԿորդիս Վերի, զԿորդի[ս][22] Միջի, զԿորդիս Ներքի, զԱյտ[ո]ւանս[23], զ[Զ]ա[ւ] գա[ւա]ռս[24], զ[Մ]ոթողանս, զՈրսի[ր]անս[25], զՍարապոնիս[26], զՃահուկ, զՓոքր Աղբակք:*** 149 ***Ունի զառիկ, եւ ի պտղոց՝ ՟շահդանակ[27], այսինքն՝ գանգար փշո[յ] սերմն:***

---

1 *V* նահանգ *փխ* նհանգ *(վեր. Սուքրեանի)*

2 *V* Եփրաթ *փխ* [յ]Եփրատ *(վեր. Սուքրեանի՝ ըստ միւսների. հմմտ. նաեւ նախ. Ե.91, 113, 174)*

3 *S* կենդանի *փխ* կենդանիս *(V)*

4 *S* Յոհան *փխ* Յոհանն *(V)*

5 *V* նահանգսն *փխ* նհանգսն *(վեր. Սուքրեանի)*

6 *V* Մոք ելից *փխ* Մոկք յելից *(վեր. Սուքրեանի)*

7 *V* Ախձնեաց *փխ* Աղձնեաց *(վեր. Սուքրեանի. տե՛ս նախ. Ե.115, 130, 210 եւ բանաւոր* **Ղ → Խ**. *նաեւ հմմտ. նախ. Ե.103՝* Ախբանիա*)*

8 *VS* Տորոս *փխ* Տաւրոս *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ե.39, 53, 59, 150 եւ բանաւոր* **ԱՒ/Օ → Ո***)*

9 *V* թ̆

10 *VS չիք* զմիւս Իշայր *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. տե՛ս* **Իշայր … Իշայր***)*

11 *VS* զԱռվենէից, *AEPv* զԱռուենից *փխ* զԱռ[ո]ւենէից *(վեր.՝ ենթադրելով, որ* **վ**-*ն* **ւ**-*ի փխն. դրել է գրիչը՝ սկզբի* **առ**-*ն իբրեւ նախդիր ընկալելով)*

12 *VS* զՎիջաց, *AEPv* զՄիջա *փխ* զՄիջաց *(վեր., տե՛ս ուշ երկաթագիր* ***Մ*** *→* **Վ**. *Սուքրեանի ծանօթագրումն է. «Միջա* ըստ այլոց»*)*

13 *Համառօտը՝* զԱղաստեայ ովիտ, զԱրգաստովիտ

14 *VS* Ջերմաձոր *փխ* [զ]Ջերմաձոր *(վեր.)*

15 *Ըստ Երեմեանի՝ վերակ-նելի է* **Ջ**երմ *փխն.* **Մ**երմ

16 *Երեմեանի վեր-նումը՝* զահրշակ *(DPv). AE* արշակ

17 *V* գեղէցկախայտ *փխ* գեղեցկախայտ *(վեր. Սուքրեանի. համառօտում* գեղեցկախայտուց *է)*

18 *AE չիք* ի *(DPv)*

19 *DPv* զկաքաւ *փխ* կաքաւս *(AE) / VS չիք* եւ ի հաւուց՝ կաքաւս *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի. տե՛ս բոլորագիր* գեղեցկախայ**տ** … կաքա**ւս***)*

20 *VS չիք* առ Ասորեստանեաւ *(վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի, ուր* առ Ասորեստանի**ւ** *է, բայց հմմտ. յաջորդ տողում եւ վերեւում՝ նախ. Ե.115)*

21 *V* ժ̆ *[=տասն] փխ* մետասան *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի՝ գաւառների ճիշտ քանակով)*

22 *VS* զԿորդի *փխ* զԿորդի[ս] *(վեր.)*

23 *VS* զԱյտւանս *փխ* զԱյտ[ո]ւանս *(վեր.)*

24 *VSPv* զԱյգառս, *v[1]* զԱյ *[այլ գրչագրեր* զԱղ, զԱզ, *ADE չիք] փխ* զ[Զ]ա[ւ] գա[ւա]ռս *(վեր.՝ համարելով, որ* «նախ՝ որեւէ վաղ արտագրող, ամենայն հաւանականութեամբ, վրիպել է բառասկզբում կրկնուող *Զ*-երից մէկը, ապա՝ գրիչների մօտ յաճախ նկատուող անկանոն գրութեան հետեւանքով *Ա*-ից յետոյ աւելացուել է *Յ* տառ, որը յաջորդ գրչին պատճառ է տուել՝ առաջացած «Զայ» բառի վերջում վրիպելու *Յ*-ից յետոյ եւ *գաւառ*-ից առաջ դժուար լսելի դարձած *Ի* տառը: Վերջապէս՝ համառօտ խմբագրութիւնը կազմելիս «խոտանուել» է հարեւան անուններում բացակայող *գաւառ* բաղադրիչը, թէպէտ իրականում «Աշխարհացոյց»-ի հեղինակը, հաւանաբար, հիմք է ունեցել ընկալելու այն հէնց իբրեւ տեղանուան բաղադրիչ ո՛չ միայն այս, այլեւ ուրիշ դէպքերում՝ նշելով, օր.՝ «զՄարի գաւառ», «զԹրաբի գաւառ»... Իսկ ընդարձակ խմբագրութեան միակ գրչագրում կամ նրա մայրում տեղի է ունեցել նախագաղափարի՝ հաւանաբար, յապաւուած *Ա* ձայնաւորով *գաւ[ա]ռ* բառի *Ի*-ի վրիպումն ու մնացորդի ընկալումը իբրեւ նախորդի -*գառ* բառավերջ...» (*Յակոբեան, 2009, էջ 292-293*). *հմա՛ վաղ շրջանի* Ծաւդէք – Զաւդէք – Զաբդիկէնէ – Բեթ Զաւդայ *մարզը՝ այլուր կոչուած նաեւ* Կորտայա, Կորդիք *եւ* Կադմեանք*)*

25 *VS* զՈթողանս, զՈրիսանս *փխ* զ[Մ]ոթողանս, զՈրսի[ր]անս *(վեր.՝ ըստ համառ., AE* Մոթողանս*)*

26 *Հմմտ. արդի* Սարայնիւս *գիւղանուան հետ՝ Զղմար-Զուլամերկից հր., Զաբի ձախ ափին. համառօտում՝* Կարապունիս, Կարատունիս, Կարաթունիս, Կարթունիս *(տե՛ս ուշ երկաթագիր* ***Ս*** *→* ***Կ****)*

27 *V* աշահդանակ *փխ* շահդանակ *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի* (DPv. *AE* շահնդակ), *ուր չիք* «այսինքն … սերմն» *վերջը. ՆՀԲ-ում՝* շահգանակ*)*